ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/11/3

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ «Սեկոնետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրության հիման վրա, 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները՝ համակարգի միջոցով (armep.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվեցին երեք աշխատանքնային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացվեց առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից «Սեկոնետ» ՍՊԸ-ն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չներկայացրեց:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը մերժել է»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Սեկոնետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սեկոնետ» ՍՊԸ-ն 22.06.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ընկերության կողմից 2017թ մայիսի 9-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մեխանիկորեն ուղարկվել է՝ ծանուցումը ուղարկած՝ info@armeps.am էլեկտրոնային հասցեին, մինչդեռ պետք է ուղարկվեր ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան էլեկտրոնային հասցեին:

Ընկերությունը գտնում է, որ տեղի է ունեցել պատահական մեխանիկական սխալ:

Ուստի Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է հաշվի առնել, այն որ ապատեղեկատվություն ներկայացնելու միտում չի ունեցել և հանդիսանում է օրինապահ հարկատու: Ընկերությունը նշել է նաև, որ վերոհիշյալ մրցույթի հաղթող է ճանաչվել, 57-ից միայն մեկ չափաբաժնում, նախկինում մասնակցել է մրցույթների՝ երբևիցե թույլ չտալով անճշտություններ կամ խախտումներ:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության գլխավոր հաշվապահ Վարուժան Առուստամյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/11/3 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 25.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, Ընկերության 22.06.2017թ. գրությունը և կից փաստաթղթերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Սեկոնետ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 14.04.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով որոշել է «Սեկոնետ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 35-րդ չափաբաժնի մասով:

Սակայն, Հանձնաժողովը 25.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության կողմից ներկայացրած հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է 22.04.2014թ.-ին «Անելիք բանկ» ՓԲԸ-ի հետ և 12.03.2015թ.-ին «Ինժնախագիծ» ԲԲԸ-ի հետ կնքված նմանատիպ պայմանագրեր, որի արժեքը կազմել է 17.055.600 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավրով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նույն հայտի N 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջարկվող՝ 9, 10, 11, 12, 13, 14, 29, 35, 45, 46, 58 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին և պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը տեխնիկական բնութագրերը:

Խորհրդում 26.06.2017թ. կայացած նիստի ժամանակ «Սեկոնետ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահը հայտնեց, որ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մեխանիկորեն ուղարկվել է՝ ծանուցումը ուղարկած՝ info@armeps.am էլեկտրոնային հասցեին, մինչդեռ պետք է ուղարկվեր ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան էլեկտրոնային հասցեին: Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ միտում չի եղել ապատեղեկատվություն ներկայացնելու:

Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ ստացված ծանուցմամբ, ինչպես նաև Հրավերով նշված չի եղել այլ հասցե, որին պետք է ուղարկվեին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Խորհրդի պահանջով Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին որպես ապացույց ներկայացրեց այն համակարգիչը, որի միջոցով Ընկերությունն ստացված ծանուցման մեջ նշված ժամկետում info@armeps.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 47-րդ կետի 2-րդ ենթակետի

համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Խորհուրդը արձանագրում է, որ.

- Ընկերությունը ստացված ծանուցման մեջ նշված ժամկետում info@armeps.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը,
- Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղն զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Խորհուրդը գտնում է, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ն՝ Հրավերով սահմանված Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, չուղարկելով Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Սեկոնետ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Խորհուրդը արձանագրում է, որ.

- Ընկերությունը ստացված ծանուցման մեջ նշված ժամկետում info@armeps.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը,
- Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղն զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Խորհուրդը գտնում է, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ն՝ Հրավերով սահմանված Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ a.amiryan@mil.am, չուղարկելով Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Սեկոնետ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ «Սեկոնետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ